



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 31 » հոկտեմբեր 2019թ.

N 215-Վ

ք. Ստեփանակերտ

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ (ՂԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ
ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԵՐԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 2018 թվականի հուլիսի 31-ի N234-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել ուսումնական հաստատության ուսուցչի (ղաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի գրավոր և բանավոր փուլերի հարցաշարերը՝ համաձայն հավելված N°1, N°2-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հուլիսի 26-ի N169/Մ հրամանը:
3. Արցախի Հանրապետության աշխատակազմի ղեկավար Է. Գրիգորյանին՝ հարցաշարերը տեղադրել ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության edu.nkr.am կայքէջում:
4. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության «Լուսարար» պաշտոնաթերթի խմբագիր Ս. Խաչատրյանին՝ հարցաշարերը տպագրել պաշտոնաթերթի առաջիկա համարում:



Handwritten signature in blue ink

Ն. ԱՂԱԲԱԼՅԱՆ